




## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Մույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material


10566

3/KC MS

10-26

1932







Ա. ԽԱՆԶՅԱՆ

ԲԱՅԼՇԵՎԻԿՈՐԵՆ ԱՇԽԱՏԵԼ,  
ՊԱՅՔԱՐԵԼ

ՍՈՑԻԱԼԻՋՄԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ  
ԲՈԼՈՐ ՖՐՈՆՏՆԵՐՈՒՄ

ЗКМ 39988-63

Խ-26 Դասագրք

Քաղաքացի

Մեծ, քաղաք, 774.

|      |      |        |
|------|------|--------|
| 1-11 | 5550 | 2/4 87 |
|------|------|--------|

|       |      |         |
|-------|------|---------|
| VII T | 7227 | 14/4 87 |
|-------|------|---------|

ЗКМ MS

Խ-26

ԿՈՒՍՅՐԱՏ 1932 ՅԵՐԵՎԱՆ



ՄԱՅՃՄԱԿ .Ա

ՄԱՅՃՄԱԿ  
ՄԱՅՃՄԱԿ ՄԵՐ ՄԵՐՈՒԿԱՅԵՆԱԳ  
ՄԱՅՃՄԱԿ ՄԱՅՃՄԱԿ  
ՄԱՅՃՄԱԿ ՄԱՅՃՄԱԿ

ՄԱՅՃՄԱԿ ՄԱՅՃՄԱԿ ՄԱՅՃՄԱԿ

APM.

3-8589 a

3KCM5

h-26

1 DEC 2009

24 SEP 2006

ԲԱՅԼՇԵՎԻԿՈՐԵՆ ԱՇԽԱՏԵԼ  
ԲԱՅԼՇԵՎԻԿՈՐԵՆ ՊԱՅՔԱՐԵԼ

ՍՈՑԻԱԼԻՉՄԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ  
ԲՈԼՈՐ ՖԻՆԱՆՍԵՐՈՒՄ

ԸՆԿ. Ա. ԽԱՆՁՑԱՆԻ ԶԱՌԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ԿՈՄՑԵՐԻՏՄԻՆԻՑՑԱՆ 8-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ

ԿՈՒՍԶՐԱՏ

1932

ՅԵՐԵՎԱՆ



6 .05. 2013

10566

Арм.

Պետերատի տպարան  
Դլավիտ 7638 (բ)  
Հրատար. 4  
Պատվեր 2304  
Ցիքաժ 5000



39899-67

## ՅԵՐԿՐՈՐԴ ՀՆԳԱՄՅԱԿԻ ՇԵՄՔԻՆ

Ընկերներ, խորհրդային Միության մեջ սոցիալիստական շինարարության ներկա շրջանի, ինչպես նաև միջազգային ընդհանուր կապության սպառիչ գնահատականը սվեց մեր կուսակցության համամիութենական 17-րդ կոնֆերանսը: Կոնֆերանսից հետո անցած ժամանակաշրջանը յեկավ, մի շարք նոր և ծանրակշիւ փաստերի հիման վրա, հաստատելու կոնֆերանսի գնահատականը միջազգային և ներքին դրություն մասին:

Բոլորիդ հայտնի յե, վոր համաշխարհային կապիտալիստական տնտեսության, իրենց իսկ կապիտալիստների խոստովանության մը՝ նախընթացը չունեցող, տարիների ընթացքում ավելի ու ավելի աճող կրիզիսի, կապիտալիստական աշխարհի իսկապես, վոր առնել դրության ընդհանուր ֆոնի վրա, խորհրդային Միության մեջ սոցիալիզմի կառուցման գործը սրարշավ առաջ և գնում, ոգտագործելով սոցիալիստական սխտեմի ներքին անսպառ հնարավորությունները և այդ սխտեմին միայն հատուկ առավելությունները: Վերջանում է առաջին հնգամյակը, վերջանում է պրոլետարիատի համար փայլուն հաջողությունների և խոշորագույն հաղթանակներով: Առաջին հնգամյակի կատարումն ու գերակատարումը, հնգամյակի՝ վորին մեր թշնամիներն սկզբում քմծիծաղով, հետո զարմանքով, իսկ այժմ սարսափով են միայն վերաբերվում՝ միջազգային սոցիալիստական հեղափոխության, ամբողջ աշխարհի բանվորների ամենախոշոր հաղթանակն է: «Պետիլետիկան» վաղուց արդեն դադարել է միայն դուռերեն բառ լինելուց: Ամբողջ աշխարհի, բոլոր լեզուների հեղափոխական բանվորների համար «պետիլետիկան» ամենահասկանալի, ամենաթանկագին և թարգմանության կարիք չզգացող բառն է: Առաջին հնգամյակի հաջող կատարման հետևանքով խորհրդային Միությունը յոթմղոնյան քայլերով առաջ շարժվեց սոցիալիստական ինդուստրացման ուղիներով, միջազգային պրոլետարիատի հայրենիքը դառնում է արդեն առաջավոր ինդուստրիալ յերկիր: մեր յերկիրը աղատվում է արտասահմանյան, կապիտալիստական յերկրների տեխնիկական կախումից: մեր վերասարքավորվող, վերակառուցվող, նոր կառուցվող դործարանները, իրար հետևից ծխացող մետաղաձուլական և քիմիական հսկաները, իրենց ուժով աշխարհում ամենատառնակարգ մեր ելեկտրոկայաններն արդեն արտադրում են այն բոլորը, կամ գրեթե այն բոլորը, ինչ վոր անհրաժեշտ է մեր ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի արտադրական տեխնիկական վերակառուցման համար: Այսպիսով, բանվոր դասակարգն ունի արդեն իր հետագա առաջխաղացումն ապահովող տեխնիկական տնտեսական – տեխնիկական բազա: Առաջին հնգամյակի հիմ-



նական քաղաքական և տնտեսական հանրազոմարը յեղավ այն, վոր հնգամյակի նախափերին տարում Սորհրդային Միության մեջ ավարտվեց սոցիալիստական տնտեսության հիմքերի կառուցումը: Առաջին հնգամյակի ամուր և հաստատուն հիմքերի վրա բարձրացնելով նոր հասարակարգի առաջին հարկաբաժինները՝ Սորհրդային միությունը ձեռնամուխ և լինում արդեն սոցիալիզմի կառուցման յերկրորդ հնգամյակին:

Կուսակցության 17-րդ կոնֆերանսը գծեց յերկրորդ հնգամյակի հիմնական ուղիվադիւղը: Յերկրորդ հնգամյակը նոր նշանակեցեր և դնում մեր պայքարի և առաջխաղացման ճանապարհների վրա: Սոցիալիզմի կառուցման առաջին շրջանից, նրա հիմքերն ավարտելով, մենք անցնում ենք արդեն սոցիալիզմի կառուցման ել ավելի ծավալուն շրջանը, անմիջական նպատակ առաջադրելով՝ յերկրորդ հնգամյակում կառուցել անդասակարգ սոցիալիստական հասարակարգ: Այսպիսով, մենք կառուցում ենք արդեն «մեր երա՛շխաբի», այն կարգերը, վորոնց մասին տարիներ ընթացելով մտածել են, վորոնց համար պայքարել են աշխատավոր մարդկության լավագույն ներկայացուցիչները, այն աշխարհը, վորի իրականացման համար գոհել են և զոհում են իրենց կյանքը հեղափոխական բանվոր դասակարգի լավագույն, հերոսական զավակները: Սոցիալիզմը գրքերի, տեսության, ագիտացիայի շրջանակները պատկանում մտել և արդեն կյանքը, նա դառնում և արդեն դործնական ճշմարտություն: Կան քաղքենիներ և «սոցիալիստական» տիրացուներ, վորոնք լավագույն դեպքում «տարակուսանք» են արտահայտում, — «մի՞թե այս եր սոցիալիզմը»: Աստվածաշնչի վրա կրթված այդ քաղքենիները սոցիալիզմը պատկերացնում են վորպես յեղեմական մի դերախո, վոր մի գիշերում պատրաստի ու անդորը իջնում և յերկնքից մեր մեղավոր յերկրի վրա: Գիտական սոցիալիզմը, մարքսիզմ-լենինիզմը նման «սոցիալիզմ» չի ճանաչում: Գիտական սոցիալիզմը, վոր ստեղծեցին մեր մեծ ուսուցիչները, Մարքսը, Ենգելսը, վորը զարգացրին, և ավելի բարձր աստիճանի հասցրին Լենինն ու Ստալինը, — սոցիալիզմն ընդունում և ամենից առաջ վորպես պայքար: Սոցիալիզմը ձեռք և բերվում, ստեղծվում և պայքարի միջոցով: Բանվոր դասակարգի լավագույն զավակների արյունով և, վոր ստեղծվում են սոցիալիզմի կառուցման նախապայմանները, բանվոր դասակարգի և աշխատավորության հորդառատ քրտինքով և շաղախվում, ցեմենտավորվում նոր հասարակարգի հիմքը: Պրոլետարական դիկտատուրայի հիման վրա, թշնամի դասակարգերի դիմադրության անխնա ջախջախման, թշնամի դասակարգերի, կապիտալիստական մնացորդների, կուլակության վերացման հիման վրա յեն ստեղծվում անդասակարգ սոցիալիստական հասարակության անմիջական կառուցման պայմանները: Սոցիալիզմի համար մղվող պայքարում բանվոր դասակարգը վերափոխում, վերակառուցում և վոչ միայն շրջապատը և տնտեսությունը, այլև իրենց՝ մարդկանց: Ընկեր Ստալինն իր հայտնի գրքում բերում և Մարքսի խոսքերը՝ ուղղված բանվորներին — «Դուք պետք և, — ասում և Մարքսը բանվորներին, — ապրեք քաղաքացիական և ազգամիջյան պատերազմների 15, 20, 50 տարիներ վոչ միայն նրա համար, վոր փոխեք հարաբերությունները, այլև նրա համար, վոր ինքներդ ձեզ փոխեք և ընդունակ դառնաք քաղաքական տիրապետության համար»: Նույն միտքը զարգացնում և Լե-

նինը — «Պրոլետարիատի դիկտատուրայի որով պետք կլինի վերադաստիարակել միլիոնավոր գյուղացիությանը և մանր սեփականատերերին, հարյուր հազարավոր ծառայողներին, աստիճանավորներին, բուրժուական ինտելիգենտներին, յենթարկել նրանց բոլորին պրոլետարական դեկավարությանը, հաղթահարել նրանց մեջ յեղած բուրժուական սովորություններն ու տրագիգիաները», ինչպես նաև անհրաժեշտ կլինի «... վերադաստիարակել յերկարատև պայքարում՝ պրոլետարիատի դիկտատուրայի հողի վրա՝ հենց իրենց պրոլետարներին, վորոնք իրենց սեփական մանր-բուրժուական նախապաշարումներից ազատվում են վոչ թե միանգամից, վոչ թե հրաշքով, վոչ թե տիրամոր հրամանով, վոչ թե լողունգի, դեկրետի, բանաձևի պահանջով, այլ միայն յերկարատև ու դժվարին մասսայական պայքարում՝ ուղղված մանր-բուրժուական ազդեցության դեմ»: Մարքսի և Լենինի չափազանց կարևոր այս մտքերը հատուկ նշանակութուն են ստանում այժմ, յերբ պատրաստվում ենք թևակոխել յերկրորդ հնգամյակը, վորի հիմնական քաղաքական խնդիրն է՝ «կապիտալիստական ելեմենտներ և առհասարակ դասակարգերի վերջնական լիկվիդացիան, դասակարգային տարբերությունների և շահագործում ծնող պատճառների լիակատար վոչնչացումը, մարդկանց դիտակցության և տնտեսության մեջ կապիտալիզմի մնացորդների հաղթահարումը, յերկրի վոլջ աշխատավոր աղաքենակության վերածումն անդասակարգ սոցիալիստական հասարակության դիտակցի և ակտիվ կառուցողների» (17-րդ կոնֆերանսի վորոշումը): Ահա ընկերներ, առաջիկա շրջանի հիմնական քաղաքական խնդիրը, վորի լուծումը հենվում և ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի արժատական տեխնիկական վերակառուցման վրա. այս հիմնական խնդրից ել պետք և բղիթ առաջիկա մեր դործնական աշխատանքների վոլջ ծրագրելը:

Արդյոք, ընկերներ, իրադործելի՞ խնդիր և յերկրորդ հնգամյակում սոցիալիստական հասարակարգ ստեղծելու հոյակապ պլանը: Կա՞ն արդյոք այդ պլանը կենսագործելու բոլոր նախադրյալները. մեր կուսակցությունը, պատմության մեջ յեղած հեղափոխական կուսակցություններից ամենից հեղափոխականն ու հետևողականը, առաջադրելով այսոր անդասակարգ սոցիալիստական հասարակարգի անմիջական կառուցումը, չի՞ կորցնում արդյոք ռեալ հնարավորությունների զգացման ու կշռման իր սուր ընդունակությունը: Բնա՞վ: Սոցիալիզմի շինարարության յերկրորդ հնգամյակը հաստատ և ամուր հենվում և մեր յերկրում կատարված սոցիալ-քաղաքական հակայական տեղաշարժերի վրա: Յերկրորդ հնգամյակում և սոցիալիզմի շինարարության բայլելիկյան այն տեմպերի վրա, վորոնք նախընթաց չունեն և չեն կարող ունենալ հեղափոխությունների պատմության մեջ: Հիւրավի՛ր, բուրժուական հեղափոխություններից ամենամեծին, Ֆրանսիական հեղափոխությանը, իր «վերջնական նպատակին» հասնելու համար, անհրաժեշտ յեղավ տեղատվությունների և մակընթացությունների 80 տարվա մի շրջան, և նույնիսկ այդքան յերկար ժամանակաշրջանում անգամ Ֆրանսական բուրժուական հեղափոխությունը, թեև հաստատեց վերջնապես կապիտալիստական հարաբերությունների «կոնսոլիդացիան», սակայն չկարողացավ նույնիսկ մինչև վերջը մաքրել նախորդ, ֆեոդալական հասարակարգի բոլոր «ավելյան



ախոռները»։ Այլ և սրբութեամբական մեծ հեղափոխութիւնը. այնքան արագ և նրա վաղըր և այնքան խոր են նրա հերկած ակոսները, վոր մի հարվածով, վորպէս միջանկյալ խնդիր, արմատապէս վճռելով բուրժուական հեղափոխութեան բոլոր խնդիրները Ռուսաստանում, ամենա-արագ թափով նա առաջ սլացալ իր անմիջական խնդիրները վճռելու ուղղութեամբ։ Հոկտեմբերյան հեղափոխութեան քառամյա տարեգար-ծի առթիւ գրված նշանավոր հոդվածում Լենինն ասում է. — «Ռուսաս-տանի հեղափոխութեան անմիջական և ամենամերձավոր խնդիրն եր բուրժուական դեմոկրատական խնդիրը՝ տապալել միջնադարի մնա-ցորդները, վերացնել դրանք մինչև վերջ, մաքրել Ռուսաստանն այդ բարբարոսութիւնից, այդ խայտառակութիւնից, այդ ամեն մի կուր-տուրայի և ամեն մի առաջադիմութեան մեծագույն արգելակից մեր յերկրում։ Մենք իրավունք ունենք, — չարունակում է Լենինը, — պարծե-նալու այն բանով, վոր մենք այդ մաքրումը կատարեցինք ավելի վճռա-կան, ավելի արագ, ավելի համարձակ, ավելի լայն ու խոր կերպով ժողովրդի մասսաների, նրա դանդաղածի վրա ներդրելու տեսակե-տից քան Փրանսական մեծ հեղափոխութիւնը ավելի քան 125 տարի սրանից առաջ... Մենք հասցրինք բուրժուական-դեմոկրատական հե-ղափոխութիւնը միևնչե վերջ, ինչպէս վոչ վոր։ Մենք միանգամայն գիտակցաբար, հաստատուն և անշեղ կերպով շարժվում ենք առաջ, դեպի սոցիալիստական հեղափոխութիւնը, իմանալով, վոր նա չի բա-ժանված չինական պարիսպներով բուրժուական դեմոկրատական հեղա-փոխութիւնից, իմանալով, վոր միայն պայքարը կընծի, թե վորչաի մեզ կհաջողվի (վերջին հաշիւով) առաջ գնալ, թե անհունորեն բարձր խնդրի վոր մասը մենք կկատարենք, թե մեր հաղթութիւնների վոր մասը մենք կամբաստենք մեզ համար։ Կապրենք, կտեսնենք» (Լենին, Յերկեր, հայերեն հրատարակ., 27-րդ հատոր, էջ 31-32)։ Մեծ ու-սուցիչը չապրեց տեսնելու համար «անհունապէս բարձր խնդրի» վոչ թե միայն «մի մասի», այլ խնդրի ամբողջութեան լուծումը, վոր մենք ա-ռաջադրում ենք արդեն յերկրորդ հնգամյակում։ 15 տարին դեռ չի բո-լորել Հոկտեմբերյան մեծ հեղափոխութիւնից, բայց մեր հեղափոխու-թիւնը արդեն մոտեցել է ընդհուպ իր «վերջնական նպատակին»։ Իրա-զործելով յերկրորդ հնգամյակը, մենք կկառուցենք սոցիալիստական հասարակութիւն, կստանալու հասարակակարգի առաջին եռա-պը։ Պատմական համաշխարհային ամենախոշոր այս խնդիրը վճռելու բոլոր հնարավորութիւններն ունի Խորհրդային Միութեան բանվոր դասակարգը։ Այդ ցուց տվեց, փայլուն պարզութեամբ, ընկ. Ստա-լինն իր ճառերից մեկում։

Մեր յերկրը, Խորհրդային Միութիւնը բնական անսահման, ան-սպառ հնարավորութիւնների յերկիր է. իր բնական հարստութիւննե-րով, հանքերով, հողագործութեան լայն հնարավորութիւններով, ե-լեկտրական ուժի անսպառ աղբյուրներով, անտառներով և այլն, և այլն, թերևս վոչ մի յերկիր չի կարող մրցել Խորհրդային Միութեան հետ։ Մենք ունենք այնպիսի իշխանութիւն, վոր հիմնական նպատակ է դնում հայտարարել այդ բոլոր, դարերի ընթացքում «քնած» հարըս-տութիւնները և ոգտադործել աշխատավոր ժողովրդի ուղտին։ Մեր իշ-խանութիւնը, խորհրդային իշխանութիւնը վայելում է բանվորների և բոլոր աշխատավորների ամենալայն մասսաների անվերապահ վստա-

հեղեթիւնը, համակրանքը և աջակցութիւնը։ Մեր իրավակարգն ա-զատ և կապիտալիստական հասարակակարգին հասուկ անբուժելի հի-վանդութիւններից և ախտերից. մեր իրավակարգը չդիտե կրիզիսներ, գործադրկութիւն, հասարակութեան նեղ վերնաշերտի շոտայութիւն, իսկ լայն մասսաների համատարած թշվառութիւն։ Մենք ունենք մեր կուսակցութիւնը, վորն աճում և ամրանում է անընդհատ բանվոր դա-սակարգի և աշխատավորների լավագույն մարդկանց հաշիւին, վոր ամեն որ, ամեն ժամ ամրացնում է իր անխղիւ իրաւերը մասսաների հետ։ Նրանց դուրսն անցած, վոր միասնական համախմբված է իր կենտկոմի շուրջը՝ ընկեր Ստալինի գլխավորութեամբ, վորի քաղաքական դժի-ճշտութիւնը փորձված է միլիոնների կողմից, ստուգված է մեր պայ-քարում և մարտերում, ստուգված է մեր հսկայական հաջողութիւն-ներով և հաղթանակներով։

Սոցիալիստական հասարակակարգի լիակատար կառուցումն ապա-հովող բոլոր պայմանները և նախադրյալները մենք ունենք։ Սակայն, նշանակւում է արդյոք, վոր դեպի այդ հասարակակարգը տանող ու-ղիներն արդեն պատրաստ, հզկված ու ասֆալտով ծածկված պողոտա-ներ են։ Յերբե՛ք։ Սոցիալիզմի ուղիները մենք հարթում ենք՝ վորպէս պատմութեան սլոններն ենք՝ համառ պայքարով և անդուլ աշխատանքով։ Յեւ թէ չեն դժվարութիւնները մեր ճանապարհի վրա։ «Յեթե այդ-պէս է, — վշշում են մեր թշնամիները, ապա ի՞նչ տարբերութիւններ են և կապիտալիստական յերկրների միջև. ձեզ մոտ ել դժվարութիւններ կան, այնտեղ ել»։ Կապիտալիզմի սարկամիտ լակիյները միայն կարող են չտեսնել այն անանցանելի անդունդը, սկզբունքային այն վիթխարի տարբերութիւնը, վոր ընկնում է մեր «դժվարութիւնների» և «նրանց» դժվարութիւնների միջև։ Մեր դժվարութիւններն աճման, առաջխա-ղացման դժվարութիւններ են, կատարից կատար բարձրացող բանակի, իր համար նոր յերկիր բացանող, այդ յերկիրը փշերից, տաստակնե-րից, մոլախոտերից մաքրող բանակի դժվարութիւններ են, «վորոնք իրենց մեջ պարունակում են նրանց հաղթահարման հնարավորութիւ-նը։ Մեր դժվարութիւնների տարբերիչ դիժը նրանումն է, վոր նրանք իրենք են մեզ հիմք տալիս նրանց հաղթահարման համար» (Ստալին)։ Կապիտալիզմի դժվարութիւնները նեխման, կործանման հոգեվարձի դժվարութիւններ են։ Կապիտալիզմն այլևս չկար չի դռնում, այդ դրժ-վարութիւններից դուրս գալու։ Նրանց դժվարութիւններն անբու-ժելի յեն, մեր դժվարութիւնները պարունակում են իրենց մեջ այդ իսկ դժվարութիւնների հաղթահարման ուղիները։ Ստա-լինդրադի, Խարկովի տրակտորային գործարանների կառուցումը հսկայական հաղթանակն է. բայց այդ հաղթանակի վերջնական ամ-բացումը կապված է դժվարութիւնների հաղթահարման հետ, անհրա-ժեշտ է պատրաստել վորակյալ կադրեր այդ գործարանների համար, ապահովել գործարանները բարձրորակ մետաղով, հաստատել գործա-րանի բանվորներին մեջ սրբութեամբական կարգապահութիւն և այլն։ Գյուղական մանր անտեսութիւնների դերակշռող մեծամասնութեան ընդգրկումը կոլտնտեսութիւններում, համատարած կոլեկտիվացման ավարտումն առաջավոր մարգերում և չրջաններում՝ պատմական հա-մաշխարհային նշանակութիւն ունեցող հաղթանակ է. ասկայն, այդ հաղթանակն ամրացնելու համար, անհրաժեշտ է հաղթահարել մի շարք



յութը զգալարութիւններ, կարողանալ պայքարել կուլակային աղբիւս-  
թյան և մանր-բուրժուական հակումների դեմ կոլտնտեսութիւննե-  
րում, հաղթահարել այդ աղբիւսութիւնները, կազմակերպել կոլտն-  
տեսային աշխատանքը, բարձրացնել աշխատանքի արտադրողակա-  
նութիւնը և կարգապահութիւնը կոլտնտեսութիւններում և այլն։  
Դասակարգային թշնամու աղետները մեր շարքերում, ալ և «ձախ» ո-  
ւորտունիւտները գլուխները կորցնում, խուճապահար են լինում այս  
զգալարութիւնների առաջ, բայց կուսակցութիւնը ջանքերն է ունենում  
տունիւտներին, պայքարի միջոցով հաղթահարում և այդ զգալարու-  
թիւնները և ճանապարհ հարթում նոր առաջխաղացման համար։ Հաս-  
կանալ և ըմբռնել մեր առաջխաղացման հակասութիւնների զխալել-  
տիկան, ըմբռնել հակադրութիւնները միասնութիւնն իրաւանու-  
թյան մեջ, չընկճվել զգալարութիւններից և չվախենալ կյանքի այն հա-  
կասութիւններից, վորոնք ծագում են մեր ճանապարհէն, չթուլացնել  
պայքարը թշնամու գործակալների դեմ, ալ և «ձախ» ուորտունիւտ-  
ների, մեծապետական շովինիստների և աղբայնականների, նրանց  
նկատմամբ հաշտութեանութիւնը ցուցաբերողների դեմ, վոր մի բո-  
ւր չի չի թուլացնել առաջխաղացման թափը, չի ջնջնել և չժանգոտեցնել  
պայքարի փորձված դէնքերը, բայց չի կիսան համառ պայքարով, յետան-  
դով և հաստատակամութեամբ հաղթահարել զգալարութիւնները, ա-  
ռաւ յերկրորդ հնգամյակի կառուցման հաջողութեան պայմանը։ Մեր  
կոմսոմոլի, կուսակցութեան հաւատարիմ, լավագոյն ոգնականի և գոր-  
ծակցի բոլոր անելիքները, աշխատանքն ու պայքարը պետք է ընկնեն  
ահա այս հիմնական պայմանից։

## ՄԵՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Վորոնք են, ընկերներ՛, մեր հիմնական աշխատանքները՝ յերկրորդ  
հնգամյակի շնորհով։ Յերկրորդ հնգամյակի հաջող ձեռնարկման կա-  
րեւորագոյն դրամականը, առաջին հնգամյակի ավարտական տարւոյ  
բոլոր պլանների քանակական և վորակական ավարտումն է։ Բոլորիդ  
հայտնի յեն հաջողութիւնների և անընդհատ վերելքի ընդհանուր ֆոնի  
վրա մի շարք թերակատարումներ և ճեղքվածքներ, վոր դեռ ունենք շի-  
նարարութեան ֆրոնտում, արդյունաբերութեան մեջ, գլուղում։ Յեա  
թողնում եմ, վոր այդ թերակատարումների մասին մանրամասն խոսի-  
լնի։ Բարեկցանք, վորովհետեւ անվիճելի յե, վոր կոմսոմոլի մեր  
կազմակերպութիւնը, կուս. կազմակերպութիւնների հետ միասին,  
չի կարող չվերցնել իր վրա այդ ճեղքվածքների լիակատար պատաս-  
խանատւութիւնը։ Մեր պլանների թերակատարման, ճեղքվածքների  
պատճառների մասին շատ է խոսվել. այսօր յես կուրենայի ձեր ուշա-  
դրութիւնը սրել այդ պատճառներից հիմնականի վրա. կասկած չկա  
վոր մեր պլանների թերակատարման ամենախոշոր պատճառներից մեկը  
աշխատանքի թույլ արտադրողականութիւնն է և այն հանգամանքը  
վոր աշխատանքի արտադրողականութեան բարձրացման կոնկրետ խըն-  
դիրները դեռ ևս մեր աշխատանքներում, մասնավորապէս կոմսոմոլի աշ-  
խատանքներում չեն գրավում իրենց արժանի տեղը, կենտրոնական  
տեղը։

Ընկեր Լենինը բազմաթիւ անգամներ շնչել է, վոր «աշխատանքի  
արտադրողականութեան բարձրացումը, վերջին հաշիւով ամենակարե-  
ւորն է և ամենադժարը նոր հասարակարգի ամրացման համար»։  
Յեթե կապիտալիզմը՝ ֆեոդալական հասարակարգի համեմատու-  
թեամբ աշխատանքի արտադրողականութիւնը հասցրեց մինչ այդ հոնա-  
նված բարձրութեան, ապա սոցիալիզմը՝ կապիտալիզմի նկատմամբ ել-  
ալիքի բարձր թռիչք և կատարելու աշխատանքի արտադրողականու-  
թեան բարձրացման ասպարիւղում։ Յեւ մենք արդեն տեսնում ենք այս  
ուղղութեամբ խորհրդային Միութեան մեջ առաջացող հեղաշրջման ա-  
ռաջին արդյունքները. որինակ՝ կարող է ծառայել Ստալինգրադի, խար-  
կովի արակտորային դործարանների, Մաքսիմոգորսկի, Կուզնեցկի մե-  
տաղաձուլարանների ոնկորդային արտադրանքը։ Սակայն աշխատանքի  
արտադրողականութեան համար բայց չի կորն պայքարող առաջամար-  
տիկներից դեռ շատ յես են մնում մեր մի շարք ձեռնարկութիւնները  
Հայաստանում. վերցրեք մեր ամենամեծ գործարանը՝ Լենինականի  
տեքստիլը։ Տեքստիլ գործարանի պլանների թերակատարումը ուղղակի  
ընդհանրական հիվանդութեան կերպարանք է ստանում. և ի՞նչ. կարելի՞  
յե բացատրել արդյոք Լենտեքստիլի հետ մնալը, ասենք, բանվորների  
պակասութեամբ կամ սարքավորման աչքի ընկնող թերութիւններով։  
Վո՞չ Լենտեքստիլի բանվորների թիւը ներկայումս պլանով նախատես-  
ված քանակից նույնիսկ ավել է. գործարանի սարքավորումը հետ չի  
մնում տեքստիլ արդյունաբերութեան այլ գործարանների սարքավորու-  
մից։ Տեքստիլի պլանների թերակատարման միտկ պատճառը, աշխա-  
տանքի վատ կազմակերպման ու աշխատանքի արտադրողականութեան  
թուլութեան մեջ պետք է վորոնել։ Կոնկրետ փաստերը վարեն կասկած  
չեն թողնում այս յեղրակացութեան ճիշտ լինելու մասին։

Վերցրեք մեր նոր շինարարութիւնը. բոլորը ծանոթ են հակայա-  
կան այն նվաճումներին, վոր տարեց-տարի կատարւում են մեր ժողո-  
ւորական տնտեսութեան բոլոր բնագավառներում։ Հակայական լարվա-  
ծութեան դնով, կանգ չառնելով զրկանքների և դոհողութիւնների ա-  
ռաջ, մեր յերկրի բանվոր դասակարգը, նրա պետութիւնը սեփական  
կուտակումներից, վորովհետեւ այլ աղբյուրներ մենք չունենք և չենք  
կարող ունենալ (արտասահմանյան յերկրաւառ. փոխառութիւններ,  
գաղութների թալանում, մասսաների շահագործում և այլն, վորոնք  
բոլոր կապիտալիստական յերկրների ինդուստրացման հիմքն են կաղ-  
մել) բաց է թողնում հակայական դուժարներ։ Ի՞նչպէս են ծախսվում  
այդ դուժարները։ Մեր մի շարք շինարարական միավորները ցույց են  
տալիս, վոր վոչ միշտ բավարար կերպով, խնայողաբար, այնպէս, վոր-  
պետիլ նախատեսված դուժարով և նշանակված ժամկետին ավարտվի և  
գործարկվի նորակառուց ձեռնարկը։ Դեռ մինչև այժմ, վորպէս ընդ-  
հանուր յերկրւոյթ մեր նորակառուցների վրա ծախսելով պլանով նա-  
խատեսված դուժարն ամբողջութեամբ, կառուցվող միավորները բարձ-  
րանում են միայն կատարվելիք շինարարութեան 60-70 տոկոսի սահ-  
մաններում։ Խախտվում են, շատ դեպքերում զգալի չափերով, նորա-  
կառուցների գործարկման ժամկետները։ Յեւ այս բոլորը խոշոր չա-  
փով, շնորհիվ շինարարական աշխատանքների վատ կազմակերպման,  
շնորհիվ կառուցողների աշխատանքի արտադրողականութեան ցածր լի-  
նիւնը, մի բնագավառ, ուր հատկապէս աչքի յեն ընկնում մեր հետա-



մնացութիւնը Խորհրդային Միութեան առաջավոր նորակառույցներէ շինարարական տեմպերի համեմատութեամբ:

Վերջերեք պղնձարդյունաբերութիւնը. Հայաստանի կոմսոմոլի անցյալ համագումարը մեծ խանդավառութեամբ ընդունեց մեր առաջարկը՝ Հայաստանի պղնձարդյունաբերութեան շէնթութիւնը վերցնելու մասին: Ուրեմն պղնձի ֆրոնտում կոմսոմոլի պատասխանատւութիւնն աւելի անմիջական և ծանրակշիռ է դառնում: Անցյալ տարվա արդյունքները պղնձի ֆրոնտում, այդ ձեռք ամենից լավ հայտնի յե, միանգամայն անգոհացուցիչ էին: Այս տարի նույնպէս միանգամայն ունալ և իրադրոճելի պլանները, թեև կատարման ամբողջ բարձր տոկոս են ցույց տալիս, ըսն անցյալ տարի՝ բայց և այնպէս դեռ հեռու յեն իսկապես վոր բավարար լինելուց: Այստեղ նույնպէս, ինչպէս նաև տնտեսութեան այլ ճյուղերում, պլանների թերակատարման հիմնական պատճառը՝ աշխատանքի վատ կազմակերպումն է և բանվորների աշխատանքի թուլ արտադրողականութիւնը:

Վերջերեք, վերջապէս, աշխատանքները գյուղում, բամբակի ֆրոնտը, տրակտորների աշխատանքը: Հայտնի յեն բոլորիդ բամբակի ֆրոնտի անցյալ տարվա խաչառակութեան աստիճանին հասնող արդյունքները, վորոնք հիմնականում հետևանք էին վատորակ աշխատանքի, ցածր արտադրողականութեան: Իսկ ինչպէս է դրութիւնը այս տարի: Անցյալ տարվա համեմատութեամբ ունենք մի շարք նվաճումներ. Նախ՝ չափակցին ոպրատունիականների «մարդարեկութիւնները»՝ Հայաստանում բամբակի մշակութեան լայնացման անհնար լինելու մասին: Բամբակի ընդհանուր տարածութեան գործիքավոր չափումը ցույց տվեց, վոր այս տարի Հայաստանում ցանկած է 29 հազար հեկտար բամբակ, վոր միաժամանակ սակայն, ցույց է տալիս ընդունված պլանի—30,000 հեկտ. վորոշ թերակատարում, վոր ընկնում է Ղամարլի և Եջմիածնի շրջանները վրա. բամբակի ցանքի հիմնական մասը կատարվեց ժամանակին. համեմատաբար բարձր և հերկի և ցանքսի վորակը: Բայց մայնպէս բամբակի ֆրոնտում գրութիւնը շատ ամբողջ գոհացուցիչ կարող էր լինել, յեթե կարողանայինք ամբողջ բարձր վորակով և արտադրողականութեամբ կազմակերպել կոլտնտեսականների և աշխատավոր դյուղացիութեան աշխատանքը: Բավական է հիշել թեկուզ այն, վոր ցանքսի ժամանակի չափազանց կարճ լինելու և քաշող ուժի պակասութեան պայմաններում շատ ցածր էր տրակտորի արտադրողականութիւնը, որական միջին հաշվով 2,2 հեկտար, վորը հետևանք էր տրակտորների վատորակի նորոգման և տրակտորիստի աշխատանքի թուլ արտադրողականութեան: Չի կարելի չհշտել այստեղ նաև բամբակի մշակման կամպանիայի (քաղհանը, ջրելը, կուլտիվացիան), վորից ըստ ելուճքան կախված է վաղվա բերքահավաքը—չափազանց թուլ ընթացքը բոլոր շրջաններում, բացառապէս կոլտնտեսային աշխատանքի վատ կազմակերպման և ցածր արտադրողականութեան պատճառով:

Մի վերջին որինակ ևս: Հայտնի յե հսկայական այն նշանակութիւնը, վոր ունեն մեր անասնապահական խորհանտեսութիւնները և կոլտնտեսային անասնապահական ֆերմաները, անասնապահութեան պրոբլեմի լուծման, բանվորներին և աշխատավորներին մսով, կաթով և յուղով ապահովելու համար: Հայաստանում մենք բավական լայն աշխատանք ծավալեցինք անասնապահական խորհանտեսութիւնների և ֆեր-

մաների շինարարութեան դժով: Սակայն ինչ ցույց տվեց այս ձմեռվա փորձը, այն, վոր մեր մի շարք խորհանտեսութիւններում, մանավանդ Լոռու, Սյրաբայի խորհանտեսութիւններում և Ղարաքիլիսայի խողաբուծական խորհանտեսութիւնում և շատ կոլտնտեսային ֆերմաներում չկարողացան փորելիշատե ապահովել անասունների խնամքի գործը: Հետևանքը՝ անասունների, մանավորապէս մատղաշ անասունների կոտորումը, փչացումը: Այս խաչառակ, անթույլատրելի յերեւելի, կարելի յե ասել վորագործութեան պատճառը խորհանտաշխատողների և կոլտնտաշխատողների վատ աշխատանքն է, անհոգ և անհոգի վերաբերմունքը դեպի պետական ու հասարակական դուլըն ու տնտեսութիւնը, կոլտնտեսային և խորհանտեսային աշխատանքի վատ վորակը, և ցածր արտադրողականութիւնը:

Հիմնական յեղրակացութիւնը, վոր բոլորում է այս բոլորից՝ կայանում է հետևյալում—նրկայումս մեր առաջ ծառացող կարևոր խնդիրներից ամենակարևորը՝ մեր աշխատանքի և տնտեսութեան բոլոր բնագավառներում աշխատանքի վորակի և արտադրողականութեան բարձրացումն է: Այստեղ է բոլոր խնդիրների խնդիրը: Առանց աշխատանքի արտադրողականութեան զգալի բարձրացման՝ չի կարող լինել վորեւէ լուրջ հաղթանակ մեր պայքարի և շինարարութեան վորեւէ ձեռնարկման:

Ինչպէս է կատարում իր դերը այս ամենակարևոր խնդրում մեր կոմսոմոլը: Չի կարելի, իհարկէ, թերադնահատել հերոսական այն աշխատանքը, վոր կատարում են հազարավոր կոմյերիտականներ, կոմյերիտական տասնյակ և հարյուրավոր բրիգադներ, սոցիալիստական աշուտանքի յերիտասարդ ենտուղիականները՝ մեր գործարաններում, նորահառույցներում, գյուղում՝ աշխատանքի վորակի ու արտադրողականութիւնը բարձրացնելու համար: Մեր այս համագումարում յերեւել կրերվեն և պետք է բերվեն յերիտասարդութեան կողմից դեպի աշխատանքը նոր, սոցիալիստական վերաբերմունքը ծավալելու և ամրացնելու հաղարավոր փաստեր և դեպքեր: Այդ աչքպէս լինելով հանդերձ՝ համագումարը պետք է ընդունի սակայն, վոր ընդհանուր առմամբ դեռևս թուլ է մեր կոմսոմոլի կոնկրետ աշխատանքն ու պայքարը աշխատանքի սոցիալիստական կազմակերպման, աշխատանքի արտադրողականութեան բարձրացման, շինարարութեան եժանցման, արտադրանքի վորակի բարձրացման փրոնտում: Վերջերեք նույն Տեքստիլը. այստեղ քիչ չեն պլանների համար հերոսաբար պայքարող կոմյերիտականներ և առանձին բրիգադներ. սակայն տեքստիլի կոմյերիտական կազմակերպութիւնն իր ամբողջութեամբ թերանում է իր պարտականութիւնների կատարման մեջ. տեքստիլ գործարանում կոմսոմոլի կազմակերպութեան սոցմըցակցութեամբ և հարվածայնութեամբ ընդգրկված մասը համեմատաբար ավելի քիչ է, ըսն ամբողջ գործարանի բոլոր բանվորների համապատասխան մասը: Տեքստիլի գործարանում դեռ մինչև հիմա յեւ բանվորների հոսունութիւնն ուղղակի անքնական չափերի յե հասնում. անկարգապահութեան, գործաւթումների, պարապուրդների, թուլ արտադրողականութեան խաչառակ պատկեր են ներկայացնում մեր տեքստիլ կոմերիտատի մի ըսնի գործարանները: Պատասխանատու յե այս խնդրում տեքստիլի կոմսոմոլը թե վորչ: Պարզ չե՞ միթե, վոր տեքստիլի նման դրութիւնը արդեն ապացույց է այն բանի, վոր կոմսոմոլն այս



գործարանում իրականում չի կարողացել կոնկրետ և արդյունավետ պայքար մղել աշխատանքի ճիշտ կազմակերպման և աշխատանքի արտադրողականության բարձրացման համար։ Սակայն այս հարցը պետք է ավելի լայն դնել։ պայքարն աշխատանքի արտադրողականության բարձրացման համար պայքար է բանվորական նոր կազմերի, յերիտասարդ բանվորների սոցիալիստական վերադաստիարակման համար։ Միայն սոցիալիստական աշխատանքի միջոցով և, վոր հնարավոր պիտի լինի վերադաստիարակել սոցիալիստական վոգով բանվորական նոր կազմերին, վոչնչացնել կապիտալիզմի մնացորդները վոչ միայն տնտեսության մեջ, այլ և մարդկանց գիտակցության մեջ, դեպի աշխատանքը սոցիալիստական վերաբերմունք ծավալելով և ամրացնելով և միայն, վոր հնարավոր պիտի լինի «յերկրի վողջ աղգարնակության վերածել անդասակարգ սոցիալիստական հասարակության գիտակից և ակտիվ կառուցողները»։ Կոմսոմոլը, վոր հսկայական անելիք ունի բանվորական նոր կազմերի, բանվորական և կոլտնտեսային յերիտասարդության սոցիալիստական դաստիարակման խնդրում, պետք է լավ ըմբռնի սոցիալիստական աշխատանքում որինակելի նշանակությունը, բանվորական և կոլտնտեսային յերիտասարդության նկատմամբ իր առաջատար դերը։ Յեւ վոչ թե խոսքով, այլ գործով, իրականում՝ գործարանում, հանքերում, շինարարության վրա, կոլտնտեսային արտում, անասնապահական Ֆերմայում, սոցիալիստական աշխատանքի արտադրողականության բարձրացման համար ամեն մի կոմյերիտական հարվածային աշխատանքի որինակ պետք է տա։ Ավելի շատ արտադրամք, բարձրարակ արտադրամք, եծամ արտադրամք, եծամ շինարարություն, շինարարության յուրաքանչյուր որքեկտի ժամանակին ավարտում— ահա ինչի համար պետք է պայքարի յուրաքանչյուր հարվածային կոմյերիտական, վորտեղ ել վոր նա աշխատելիս լինի։

Շուտով լրանում է մի տարի այն օրից, յերբ մեր առաջնորդ ընկ. Ստալինն առաջադրեց աշխատանքի կազմակերպման նշանավոր 6 պայմանները, վորոնք իրավամբ կոչվեցին հաղթանակի պայմաններ։ Ընկեր Ստալինի 6 պայմանների հիմքը կաղմում է ըստ ելույթյան աշխատանքի արտադրողականության բարձրացման և այդ հիման վրա արդյունաբերության ներքին կուտակումների հնարավորությունների լայնացման պահանջը։ Համկոմկուսի Կենտկոմի վերաբերյալ 4-ի հայտնի վորոշումը կոլտնտեսային շինարարության մասին՝ նույն նշանակություն է հետապնդում՝ կոլտնտեսային աշխատանքի արտադրողականության բարձրացումը։ Ստալինյան 6 պայմանների կենսագործման, կոլտնտեսության ներքին ամրացման, նրանց աշխատանքների ճիշտ կազմակերպման կոնկրետ խնդիրները պիտի կազմեն մեր ներկա համագումարի ուշադրության կենտրոնը։ Համագումարը պետք է պահանջ դնի՝ մինչև ընկ. Ստալինի հայտնի ճառի առաջին տարեդարձը, առաջիկա մեկ ամսով ընթացքում աշխատանքի բոլոր, մասնավորապես հետ մնացած ճյուղերում հատուկ աշխատանք ծավալել, իրականում ապահովելու համար ստալինյան պայմանների կենսագործումը։ Թաթի տալ հետ մնացած և թմրած ողակները, ավելի լարել ուժերը, դիմավորել առաջնորդի 6 պայմանների առաջին տարեդարձը՝ այդ պայմանների իրական կենսագործմամբ, աշխատանքի արտադրողականության բարձրացմամբ, աշխատանքի ճիշտ կազմակերպման հիման վրա ապահովել ավարտական

տարվա բոլոր պլանների ու առաջադրանքների կատարումը— ահա մեր հիմնական պահանջը կոմսոմոլի կազմակերպությանը։ Աշխատել այնպես, վորպեսզի կոմսոմոլի ամեն մի ընկ. արժանի լինի Ստալինի ճառի առաջին տարեդարձը դիմավորելու հաղթանակի ապագործով— ահա մեր պահանջը կոմսոմոլի ընկերից։ Համագումարը պետք է պատասխան տա, թե աղտի կատարվի՞ արդյոք այս պահանջը կոմսոմոլի ընկերների կողմից։

Ընկերներ՝ — Աշխատանքի կազմակերպման և նրա արտադրողականության խնդիրներին զուգընթաց, նույն չափով կարևոր և ալթմեական է այսօր ապրանքաշրջանառության լայն ծավալման խնդիրը։ Ապրանքաշրջանառության ծավալումը, այդ պետք է լավ ըմբռնել, բայց և իկյան ամենակարևոր լծակներից մեկն է։ Առանց ապրանքաշրջանառության լայն ծավալման՝ անհնար է ապահովել սոցիալիզմի կառուցման բարձր տեմպեր, անհնար է բարելավել բանվորների և աշխատավորական լայն մասսաների մատակարարման գործը։ Համկոմկուսի Կենտկոմի և Միությանական Ժողովուրդի վերջին մի շարք վորոշումները մթերումներին և կոլտնտեսային առևտրի մասին՝ ապրանքաշրջանառության ծավալման նոր շրջանի սկիզբն են դնում։ Այդ վորոշումների բայց և իկյան կենսագործումը վոչ միայն հնարավորություն կտազդի զգալի չափով բարելավելու մատակարարման գործը, այլ և հոր մի խթանի հանդիսանա կոլտնտեսության ամրացման, տնտեսական առողջացման, կոլտնտեսային աշխատանքի արտադրողականության բարձրացման համար։ Ապրանքաշրջանառության այն ալթուսացումը, վոր նկատվում է վերջին օրերս, դեռևս միանգամայն անբավարար պետք է համարել։ Այս ասպարիկում իր կործանիչ դերն է կատարում մեր մի շարք օրգանների ծանրաշարժությունը, ճկունությունից զուրկ լինելը և բյուրոկրատիզմը։ Հետաքրքիր կլինեի այս համագումարին հայտնել, թե կոմսոմոլի կազմակերպությունները տեղերում ի՞նչ չափով կարողացել են կենսագործել կուտակության դիրեկտիվները ապրանքաշրջանառության ծավալման, կոլտնտեսային առևտրի մասին։ Դժվար թե ընկերները կարողանան պարծենալ վորեւ յուրջ աշխատանքով այս ուղղությամբ։ Ընդհանուրապես, յեթե կոմսոմոլի կազմակերպությունները արդյունաբերության կոնկրետ խնդիրներին մոտեցել են ընդհուպ՝ ապա նրանք դեռևս մի տեսակ անբնական բան են համարում կիպ մոտենալ նաև առևտրի, մատակարարման խնդիրներին։ Կոլտնտեսային բազարը, խանութը, գործակատարը դեռևս աղտ հապկացողություններ են կոմսոմոլի համար։ Յեւ վոչ միայն կոմսոմոլը, կուտակցական և խորհրդային կազմակերպություններն ել տեղերում դեռ շատ դանդաղ են շարժվում։ Խորհրդային առևտուրը նոր, ավելի բարձր աստիճանի վրա ծավալելու ուղղությամբ։ Կան գյուղեր, ուր դեռ մինչև այժմ ել նույնիսկ ինչպես վոր հարկն է, չեն մասսայականացված Կենտկոմի վորոշումները՝ առևտրի մասին։ Հետևանք լինում է վոչ միայն այն, վոր կոլտնտեսային առևտուրը թույլ է ծավալվում, այլ և այն, վոր չարժին և սպեկուլյանտը շարունակում են ճարպ կուտակել բանվորի և աշխատավոր գյուղացու հաշվին։ Մինչդեռ Կենտկոմը կտրականապես պահանջում է, լայն ծավալելով կոլտնտեսային առևտուրը՝ թույլ չտալ սպեկուլյանտին և մասնավոր առևտրականին՝ ողտվել, շահ ստանալ բանվորի և գյուղացու հաշվին։ Սովորել կոլտնտեսային առևտուր կազ-



մակերգել, — ահա ներկա չըջանի ամենակարևոր պահանջները մեկը, և այդ պահանջը դրվում է նաև կոմսոմոլի առաջ: Կոմսոմոլի կազմակերպությունները տեղերում պետք է պատասխանատու լինեն կոլտնտեսություն բաղադրի, կոլտնտեսային խանութի, կոոպերատիվի յուրաքանչյուր խանութի աշխատանքների համար, ճիշտ այնպես, ինչպես նրանք պատասխանատու լին գոյում իրենց գործարանների արդիֆինպլանների կատարման գործում: Տալ ապրանքաշրջանառություն, առևտրի ֆրոնտում աշխատելու լավագույն կոմյերիտականներին, չխորշել «գործակատարին» պաշտոնից, կազմակերպել հարվածային աշխատանքը խանութում և բաղադրում, անխնա պաշարերի գողերի և մորթեպաշտների դեմ, հասցնել գյուղը և գյուղացուն ապրանքային այն ֆոնդերը, վորոնք նախորդված են գյուղի համար՝ առանց թույլ տալու, վոր այդ ֆոնդերի մի մասը հարվի մինչև գյուղացուն հասցնելը, անել այն ամենը, ինչ վոր հնարավոր է աշխատավորության խնդիրներից մեկը՝ ներկա չըջանում:

Ձեզ լավ հայտնի լին, ընկերներ, բանվորական մատակարարման, բանվորական ճաշարանների բոլոր թերությունները: Ընդհանուր սովորություն է դարձել ամեն անգամ դանդաղել՝ թե մատակարարման գործի վատ դրությունը կապված է կենտրոնից այս մթերքը կամ այն մթերքը բաց չլինելու հետ: Փոխանակ տեղական հնարավորությունների ոգտադործման, սեփական տնտեսություններին, բանջարանոցներին, ճաղարարությունը դարի տալու, մարդիկ դերադասում են ամբողջ հույսը կենտրոնական մատակարարման վրա դնել: Սա վոչ այլ ինչ է, քան ամենախախտակ բյուրոկրատիզմ և կորուղակական տենդենցների արտահայտություն: Այդ արամադրություններին պետք է անխնա հարվածել: Ժամանակն է վերջապես պահանջելու, վորպեսզի յուրաքանչյուր բանվորական կոոպերատիվ, յուրաքանչյուր ճաշարան լայն ծավալի սեփական տնտեսությունը, ճաղարանոցը, խոզաբուծարանը, կաթնատնտեսությունը, բանջարանոցը և այլն: Այս աշխատանքներին նմանապես կոմսոմոլը իր ամենայնոգուն մասնակցությունը պետք է բերի: Ավելի քիչ ճառեր ու խոսքեր, ավելի քիչ բանաձևեր՝ ավելի շատ իրական աշխատանք, թող դա լինի սկզբում «փոքր» աշխատանք՝ տեղական հնարավորություններին լայն ոգտադործմամբ՝ բանվորական մատակարարման գործը լավացնելու համար: Ասում են Հայաստանի պիոներները հորթերի չեֆությունը վերցրել են իրենց վրա: Ձե՛ք կարելի արդյոք հորթերին ավելացնել նաև ճաղարանները, վորոնք նույնպես լավ, գործունյա, յուրանուն չեֆի կարիք են գոյում: սակայն մի պայմանով, վորպեսզի պիոներները և նրանց ղեկավարները անձամբ պատասխանատու լինեն խորհրդային հասարակայնության առաջ՝ վատ խնամքի պատճառով սատկող յուրաքանչյուր հորթի և ճաղարի համար:

Ընկերներ, վոչ այլ վոք, քան յեթե Լենինն եր, վոր ամեն անգամ պահանջում եր — ավելի քիչ «քաղաքական շաղակրատություն», ավելի շատ հասարակ, առոյթ, գործնական աշխատանք: Նման հարցադրում յերբեք ել չի նշանակում, թե մեր աշխատանքներն իրենց սկզբունքային քաղաքական բարձրությունից պետք է իջնեն գործամոլության առտի՝ ճանին: Ընդհակառակը, նեղճակատ գործամոլությունը նույնքան խորթ է թշնամի յե բայլչեիցմին, ինչքան հեղափոխական գործնականից կտրուված բուրժուական-խնտելիգեստական շաղակրատությունն ու սխտիստ-

տիկան: Մենք պետք է պաշարենք վորոչ հալիով տարածված այն յերևույթի դեմ, յերբ մեր ժողովներում, և կոմսոմոլի, և բանվորական ժողովներում յերկարաշունչ ճառերը, ժողովից ժողով կրկնվող առաջարկությունները չեն վերածվում կենդանի գործի, իրական, շոշափելի աշխատանքի: Կոմսոմոլը պետք է պաշարի սկսված գործը մինչև վերջը հասցնելու, ընդունված առաջարկությունն իրականում կենսագործելու համար: Կարելի յե բաղաժիվ որինակներ բերել, թե ինչպես մեր կոմսոմոլի ուշադրությունից վրիպում են հաճախ առոյթ աշխատանքի կարևոր խնդիրները, վորոնց վճռման համար կոմսոմոլի նախաձեռնությունը և իրական աջակցությունը հսկայական նշանակություն կունենային: Վերցրե՛ք շատ հասարակ և «փոքր» մի գործ. մեր մայրաքաղաքի մարքուկյան խնդիրը, փողոցների դրությունը և այլն: Մեզ մոտ ամեն քաղաքում դանդաղում են քաղաքի կեղտոտություն մասին, անտանելի փոշու մասին: Մեր մի շարք փողոցներն այնպիսի դրություն մեջ են, վոր փոքր անձրևից հետո վոչ միայն կոշիկներ են կոտվում փողոցով անցնելիս, այլ կարճահասակ մարդիկ ցելում խեղդվելու վտանգի տակ են ընկնում (ծիծաղ): Իսկ ի՞նչ գործնական քայլի յե դիմել Ֆերեվանի կոմսոմոլը՝ բարելավելու համար քաղաքի բարեկարգությունը: Դուք կասե՛ք, վոր կոմսոմոլը հետևում է և ողնում տրամվայի կառուցման գործին: Տրամվայի կառուցումը, անշուշտ, կարևոր գործ է, բայց յերբեք ել չի ադատում Լոմոսոմոլը քաղաքի բարեկարգման այլ խնդիրներին ոժանդակելուց: Մի՞թե դժվար եր Ֆերեվանի կոմսոմոլի կազմակերպության համար, սեփական նախաձեռնությունը, քաղաքի հրդի հետ միասին, կարգի բերել, առնե՛ք կայարանի ճանապարհը, յցնել դեթ խոր փոսերը, ուր ամեն ոք փչանում են մեքենաները, խանդավում է յերթևեկությունը և այլն: Դժվար խնդիր չե՛ր, բայց կան կոմյերիտականներ, վոր նման խնդիրների առաջադրումը և լուծումը «հասարակ» և «փոքր» խնդիրներ են համարում, վորոնցով «կոմսոմոլին վայել չե դրադվել»: Կամ մարդիկ կարծում են, վոր քաղաքի բարեկարգություն մասին բանաձև հանելով արդեն սպառվում է կոմսոմոլի դերը: Նման անտարբեր վերաբերմունքը դեպի ճանապարհը, կամուրջը, ծառատնկումը և այլն և այլն, տարածված յերևույթ է կոմսոմոլի չըջանային կազմակերպությունների մեջ: Յե՛վ ժամանակը չե՛ միթե, վոր կոմսոմոլի յուրաքանչյուր կազմակերպություն, յուրաքանչյուր ըջիջ, յուրաքանչյուր կոմյերիտական՝ յերեսը շուտ տա դեպի գործնական աշխատանքի, կոնկրետ, առոյթ խնդիրների լուծումը, վորոնց միջոցով է միայն հնարավոր կուտակելու ղեկավար դժի իրական կենսագործումը:

Ընկերներ, — Անհրաժեշտ է մի քանի խոսք ևս ասել մեր գյուղական աշխատանքների հիմնական խնդիրների մասին: Բոլորիդ հայտնի յե այն դնահատականը, վոր ավելի կուտակելության կենտկոմն անցյալ տարի գյուղացիական հարցում Անդրկովկասում կատարված քաղաքական կոգյիտ սխալների մասին: Կենտկոմի բայլչեիկյան ցուցմունքներից հետո, անցել է արդեն յոթ ամիս, և ժամանակն է արդեն հանրադրամարներ անել, թե ի՞նչ հալիով մեր կազմակերպությունները տեղերում կարողանել են գործ դարձնել կենտկոմի ցուցմունքները: Վոչ վոք չի կարող ժխտել խոշոր այն աշխատանքը, վոր ծավալելիս բոլոր կուտակիական կազմակերպությունները տեղերում՝ ուղղելու համար կատարված



սխալները, ամբացնելու համար մեր դիրքերը գյուղում: Ապացույց՝ կուլակ-դաշնակցական բանդիտիզմի վոլնչացումը, գարնանացանի համաճարը և ավարտումը չըջանների մեծ մասում, կոլտնտեսությունների անհամեմատ ավելի ամուր և կայուն դրուժյունը և այլն, աշխատավոր դյուղացիության լայն մասսաների սերտ համախմբումը մեր ձեռնարկումների շուրջը գյուղում: Այս բոլորի հետ մեկտեղ, պետք է ընդունենք սակայն, վոր բաղմամբիվ չըջաններում մեր կազմակերպությունները գեղեկ չեն կարողացել մինչև վերջը հասցնել սխալները ուղղման գործը և լայն պայքար ծավալելով գլխավոր վտանգ՝ աջ թեքման դեմ, և «ձախ» քայլադրուժյունները դեմ, ապահովել կուսակցության քաղաքականության ճիշտ կիրառումը գյուղացիական հարցում: Ինչպես յեբեվում է, մեր ընկերները մի մասը չի կարողացել գեղեկ ըմբռնել ահտուալ աշխ նշանակությունը, վոր կատարված սխալների պայմաններում, ունի պայքարը «ձախ» ուղորտունիզմի դեմ: Հեռանալով «ձախ» քայլադրուժյունների ռեցիդիվների նոր արտահայտություններ, փոխանակ բայլչեիկյան պայքար մղելու կոլտնտեսություններ, վորպես գյուղացիական արտելների, տնտեսական-կազմակերպական և քաղաքական ամբողջական համար, մարդիկ իրենց համար աննկատելի կերպով սպրդում են արտելներն ըստ ելուժյան կոմունիստների վերածելու ուղին: Այլապես ի՞նչով բացատրել այն խայտառակ դանդաղությունները, վոր հայտարարեցին մի շարք չըջաններ կենտկոմի մարտի 26-ի վորոշման հիման վրա, անստունները պարտադիր համայնացման սխալներն ուղղելու, գյուղատնտեսական արտելի կանոնադրությունը ճշտել կիրառելու գծով: Այլապես այն նշանակություն չունեցող մի քանի ծառերի, մեկ-մեկ փեթակների, մեկ-մեկ ալճերի համայնացումը, մթերումների ընթացքում, չնայած կենտկոմի վճռական նախադրուժյուններին, կատարվող սխալները, գյուղացիական մասսաների մեջ բացատրական, համոզելու աշխատանքը մերկապարանոց վարչարարությամբ փոխարինելու պրակտիկան, — այս բոլորը մի՞թե ապացույց չեն այն բանի, վոր պայքարն ուղորտունիզմի, նրա «ձախ» արտահայտությունները դեմ մի շարք չըջաններում, գեղեկ ըմբռնող չափով չի ծավալված: Հայկոմ-կուսի կենտկոմի մայիսի 27-ի վորոշումներն այս խնդրի մասին հսկայական կարևորագույն դոկումենտներ են: Կոմսոմոլի յուրաքանչյուր կազմակերպություն պետք է այդ վորոշումների հիման վրա մի անգամ ևս վերելից մինչև ներքև վերանայի իր աշխատանքները պրակտիկան: Մեր բոլոր կազմակերպությունները պետք է անխնայ լինեն վոչ միայն կուլակային անմիջական ազնա աջ ուղորտունիստների հանդեպ և դուրս չպրտեն նրանց մեր շարքերից, այլև անխնա կուսակցությունից հեռացնեն և «ձախ» քայլադրուժյուններին, «ձախ» ուղորտունիստներին, վարոնք մի քիչ ավելի դարտուղի ճանապարհներով կատարում են նույն կուլակի պատվերը, վորոնք դեմ են դուրս դալիս կամ դիմադրում են կենտկոմի մարտի 26-ի վորոշման կիրառմանը, նվոց են բարձրացնում, թե մեկական կովերի և մի քանի մանր անասունների վերադարձը քանդում են կուլտնտեսային Ֆեբմաները, իսկ ըստ ելուժյան ամենավտասակար և քայքայիչ աշխատանք են կատարում կոլտնտեսությունում, վորովհետև խանգարում են կոլտնտեսության ամրացմանը՝ գյուղատնտեսական արտելի կանոնադրության հիման վրա: Պայքարելով ուղորտունիզմի բոլոր արտահայտությունները դեմ, կուսակցական կազմակերպությունները

բոլոր չըջաններում նոր թափ պետք է հաղորդեն գյուղական աշխատանքներին բոլոր ճյուղերում և ողակներում, ամենից առաջ կենտրոնացնելով ուշադրությունը կոլտնտեսությունների ամրացման, նրանց ապրանքարնության բարձրացման աշխատանքների վրա: Խիսի վարչարարության քայլադրուժյան արտահայտությունները, մասսայական լայն աշխատանքի միջոցով, գյուղական կոմունիստի և կոմբերիտականի անձնական որինսկով պայքարի հանել կոլտնտեսականին, անկուսակցական աշխատավոր դյուղացուն բարձր բերքատվության, կոլտնտեսության ամրացման համար, — այս է խնդիրը: Յեվ այս խնդրի լուծման գործում կոմսոմոլը նույնպես պետք է լինի պայքարի առաջին դժի վրա:

Ընկերներ՝ — Յեթե մեր կուսակցությունը, կոմսոմոլը և լայն մասսաները միշտ ել ուշադիր հետևել են միջադրային ընդհանուր դրություն՝ ապա մեր ուշադրությունը ներկայումս ավելի զգաստ և ավելի սուր պիտի լինի. պատերազմի վտանգը, ավելի ճիշտ հեղափոխական բանվոր դասակարգի միջադրային հայրենիքի վրա ղեկավար ճարձակում սկսելու վտանգը յերեք այնքան այժմեյական և սուր չի յեղել, ինչպես այժմ: Յեվ, յեթե մինչև այժմ դեռ չեն ծավալվել համաշխարհային նոր ու հանդ պատերազմի բոցերը, յեթե պատերազմի կրակն առայժմ ճարձատում է Մանջուրիայի դաշտերում և չի բռնկվել ավելի լայն տերրիտորիայի վրա՝ ապա այդ միայն և միայն շնորհիվ այն քաղաքականության, խաղաղություն պահպանելու հետևողական քաղաքականության, վոր վարում է Նորհրդային Միության կառավարությունը: Միջադրային խաղաղության ամենաուժեղ ֆակտորը մեր ամուր և անսասան կարմիր բանակն է: Միջադրային կապիտալիզմը, իր ներկա անել կացությունից չի տեսնում ուրիշ «յեղ», քան, յեթե նոր պատերազմը: Ազգերի Լիգան, վոր, իբր թե կոչված էր միջադրային խաղաղության «ոչհասարակ» լինելու, դիմադրելով յեղավ վերջնականապես, վորպես պատերազմի գործիք, վորպես Նորհրդային Միության վրա պատերազմ պատրաստող իմպերիալիստական յերկրների շտաբ, վորպես՝ պատերազմների միջոցով աշխարհի, դադուժների նոր վերաբաժանում պատրաստող արյունոտ մի ուղան: «Զինաթափման» կոնֆերանսի խայտառակ ձախողումը, զինաթափման մասին խորհրդային պատվիրակության բոլոր առաջարկների տապալումը, Լիգայի կողմից ճադոնական իմպերիալիստների Զինատանի նկատմամբ դիշատիչ պլանների հովանավորումը, — այս բոլորը կարող են արդյոք վորեւ կասկած թողնել իմպերիալիստների իսկական նպատակների մասին: Կապիտալիստական կործանվող աշխարհի բոլոր ամենասև ուժերը, իմպերիալիստների կողմից Միության սահմանների մոտ կապված բոլոր գայլերն ու շները, ոուս սպիտակ տարագրությունը շարժման մեջ են դրվել արդվակացիայի ամենաազդեցիկ միջոցներով՝ պատրաստելու համար հարձակում Միության վրա: Ֆրանսական հանրապետության նախագահի սպանությունը հանգամանքները, սպանության հեղինակ և կազմակերպիչ ոուս կազմակերպված եմիգրացիայի անպատիժ թողնվելը և հովանավորումը Ֆրանսիայում, Չեխո-Սլովակիայում և այլն, մի՞թե ցույց չի տալիս բուրժուական մի շարք հզոր յերկրների իրական ծրագրեր՝ ինչ գնով էլ լինի, պրովակացիայի յենթարկել Նորհրդային Միությունը: Յեվ վերջապես՝ ճադոնական իմպերիալիստներից ամենալիստները սլարդ և աշխարհ չեն ել քաշվում հայտարարելուց, վոր ճադոնիստ պատրաստվում է և

39999-67





պետք է պատերազմ բանա խորհրդային Միության դեմ և «ինչքան շուտ սկսվի պատերազմը՝ այնքան ավելի լավ ձապոնիայի համար»։ Ինչ վերաբերում է մեզ, ընկերներ, պարզ է, վոր մեզ սարսափ չեն կարող պատճառել վո՛չ ճապոնական, վո՛չ ել ալ իմպերիալիստների պլաններն ու հոխորտանքները։ Մենք չենք մոռացել, թե ինչպես սրանից 12—13—14 տարի առաջ 14 լեզուներ և ազգեր հարձակում գործելով խորհրդային Ռուսաստանի վրա՝ բոլորն ել զեն շարտվեցին ջարդված ժանիքներով։ Մենք չենք մոռանում, վոր 1932 թիվը 1919 թիվ չի։ Խորհրդային Միությանը, նրա տնտեսությունը, նրա պանծալի կարմիր բանակն այսօր անհամեմատ ավելի հզոր, ուժեղ և պատրաստ են, քան առաջ։ Խորհրդային Միության պրոլետարիատը, նրա առուր և հաստատուն հենարանը՝ կոլտնտեսային գյուղացիությունը, աշխատավորության ամենալայն զանգվածները մեկ մարդու պես պատրաստ են և լավ են յուրացրել առաջնորդի լոզունգը— ուրիշի հոգի վրա աչք չունենք, բայց մեր հողից վո՛չ մի թիղ վո՛չ վո՛քի չենք դիժի։

Ընկերներ, սուր և այժմեական է պատերազմի վտանգը, ստեղծված չափերի մոռանալ, վոր խորհրդային Միության միջազգային դրությունը խոշոր չափով պայմանավորվում է նաև նրանով, թե ի՞նչպես ենք մենք ձեռք հետ աշխատում, կատարում պլանները, ամրացնում յերկրի պաշտպանությունը։ Չափերի մոռանալ, վոր մեր յուրաքանչյուր հաջողություն և նվաճում, շինարարության արագացումը և եժանցումը, պլանները կատարումը բարձրացնելով մեր յերկրի ռազմական հզորությունը՝ միաժամանակ կարեւոր տեղ են բռնում պատերազմի և խաղաղության կշեռքի նժարների վրա։ Ներկա միջազգային դրության առաջին յեղրակացությունը՝ այդ պատճառով՝ կայանում է նրանում, վոր ավելի բարձր աստիճանի դրվի մեր բոլորի, մասնավորապես նաև կոմսոմոլի պատասխանությունը՝ աշխատանքի բոլոր բնագավառներում։ Միջազգային ներկա դրությունը հրամայական պահանջ է դնում՝ ռազմականացնել կոմսոմոլը, աշխատել տիրապետել ռազմական նոր տեխնիկային, ուժեղացնել կապը բանակի և նավատորմի հետ, միջազգային ներկա դրությունը պահանջ է դնում ամեն մի կոմյեբրիտականի առաջ՝ «պատրաստ լինել աշխատանքի և յերկրի պաշտպանության համար»։ Ներկա համադրումարն այս մասին վճռական և կտրուկ պահանջ պիտի դնի կոմսոմոլի բոլոր կազմակերպություններին, բոլոր կոմյեբրիտականներին առաջ։

Չափազանց պատասխանատու և կարեւոր է դառնում նաև պրոլետարական Ֆրիդուլտուրայի դերը։ Կոմսոմոլը պետք է ավելի կիս մոտենա պրոլետարական Ֆրիդուլտուրայի բոլոր կազմակերպություններին, նրանց միջոցով ընդգրկել աշխատավորական յերիտասարդությունն ամբողջությամբ պատրաստի Ֆրիդուլտուրայի և հողեպես առողջ, յեռանդուն, աշխատունակ և մարտունակ սոցիալիստական սերունդ։ Թերեւ յես սխալվում եմ, բայց ինձ թվում է, վոր մինչև վերջերս կոմսոմոլը քիչ ուշադրություն է դարձրել յերիտասարդ սերնդի Ֆրիդուլտուրային դաստիարակության խնդիրներին վրա՝ դա յերկրորդական մի բան համարելով։ Մինչդեռ Ֆրիդուլտուրայի գործը կոմսոմոլի ամենակարեւոր և անմիջական աշխատանքն է։ Ընկեր Լենինը հատկապես չեչտել է, վոր «յերիտասարդությանն առանձնապես անհրաժեշտ է կենսաբալիստություն և սուրյգություն, առողջ սպորտ, մարմնամարզություն, լող, և քսկուրսիաներ, ամեն տեսակի Ֆրիդուլտուրայի վարժություններ, մտախոր խաղերի բազմապիւղման խնդիրներ, ուսուցում, ղերլուծում, հեռադաստիություն և ոյս

ամենն ըստ հնարավորության միատեղ»։ Վատ չեք լինի, յեթե մեր համադրումարը հարցն այնպես դներ, վոր լավ կոմյեբրիտական լինելու համար քիչ է լինել սոսկ հարվածային արդյունաբերության մեջ։ Լավ հարվածային լինելու համար անհրաժեշտ է լինել նաև լավ Ֆրիդուլտուրայի, ամրացնել մկաններն ու ջղերը, կազմակերպել կուլտուրական ճանդիտ, տիրապետել ռազմական գործին, լինել նոր հասարակարգի բաղամկողմանիորեն պարզացած անդամներ։ Այդ պատճառով ել ներկա համադրումարի ամենակարեւոր պահանջներից մեկը պետք է լինի— Հայաստանում չպիտի և մնա ֆրիդուլտուրայի շարժումից դուրս վո՛չ մի յեբրիտաւարդ բանվոր ու կոլտնտեսական։

Ընկերներ, —մեր առաջ դրված հիմնական խնդիրները շարքը լրիվ չեք լինի, յեթե մի անգամ եւ չընդգծենք կոմսոմոլի դերը, վորպես յերիտասարդ մասսաների կոմունիստական, բայլչեիկյան դաստիարակության հիմնական դպրոցի։ Պատահական չէ, վոր ձեր համադրումարը քրննելու յե ընկ. Պապիկի հատուկ ղեկուցումը՝ յերիտասարդության կոմունիստական դաստիարակության հաղթական խնդիրներին մասին։ Պետք է ընդգծել, վոր չնայած կոմունիստական դաստիարակության հիմնական բաղկացուցիչ մասի, կոմսոմոլի տեսական—բաղադրական պատրաստության հսկայական նշանակության, այդ աշխատանքները կոմսոմոլի աշխատանքներում դեռեւ «ենդ» տեղն են կազմում։ Այդ է պատճառը, վոր որինակ, յերկրորդ հնգամյակի կապակցությամբ առաջադրվող մի շարք տեսական խնդիրները շուրջը, պետություն, կուսակցության դերի մասին, բանվոր դաստիարակի և գյուղացիության փոխհարաբերություններին, մասին յերկրորդ հնգամյակում և այլն, և այլն, նույնիսկ կոմսոմոլի ակտիվ մի շարք ընկերներին կողմից նկատվում է սխալ, մշուշապատ հարցադրում։ Միայն տեսական պատրաստության և աշխատանքի միջոցով դաստիարակման սերտ կապակցությամբ՝ հնարավոր է պատրաստել իսկական կոմյեբրիտականի տիպարը, բայլչեիկյան նոր սերունդը։

Կոմսոմոլի վողջ աշխատանքներում, և ամենից առաջ նրա դաստիարակական աշխատանքներում, հիմնական դադափարը պետք է լինի բայլչեիկյան ինտերնացիոնալիզմը։ 1925 թվին, պատասխանելով «կոմսոմոլական Պրավդա»-յի հարցերին՝ ընկ. Ստալինն ասում եր, վոր (ինտերնացիոնալիզմի մեջ է կոմսոմոլի ուժը և հզորությունը։ Հարկավոր է, վորպեսզի ինտերնացիոնալիզմի վողին միշտ սավառնի կոմյեբրիտությունը, հարկավոր է, վորպեսզի մեր յերկրի պրոլետարիատի պայքարի հաջողություններն ու ձախորդությունները կոմյեբրիտականների գիտակցությունից մեջ կապվեն միջազգային հեղափոխական շարժման հաջողությունների և ձախորդությունների հետ»։ Առանց ընկ. Ստալինի այս կարեւորագույն պահանջի կենսագործման, մանավանդ Հայաստանի և Անդրկովկասի կոմսոմոլի համար չկա և չի կարող լինել իրական կոմունիստական դաստիարակություն։ Կոմսոմոլը պետք է դաստիարակի բանվորական և գյուղացիական յերիտասարդ սերունդն ինտերնացիոնալիզմի վողով— այս է կոմդաստիարակության ամենաառաջնակարգ խնդիրը։ «Համբերատար և հաստատակամ լինիլյալ ուսում», — այս է այն գիրը։ «Համբերատար և հաստատակամ լինիլյալ ուսում», — այս է այն ուղին, վոր պիտի անցնի կոմյեբրիտության ակտիվը, յեթե կոմյեբրիտությունը հիսրավի ուղում և դաստիարակել յերիտասարդություն մի յիտնավոր մասսաներին պրոլետարական հեղափոխության վողով» (Ստալին)։ Ստալինյան այս պահանջն այսօր ավելի քան այժմեական



և Հայաստանի մեր կոմսոմոլի համար: Համագումարը պետք է իրականացնի սկզբնական կոմսոմոլի բոլոր կազմակերպություններից, և ամենից առաջ նրա ակտիվից՝ իրական և լուրջ, «համերա տար և հաստատակամ» աշխատանք մեր յերիտասարդության տեսական-քաղաքական մակարդակը բարձրացնելու համար: Հազեցնելով իր բոլոր աշխատանքները բայլչեիկյան խնտերնացիոնալիզմով, Հայաստանի կոմսոմոլը միաժամանակ ավելի ակտիվ մասնակցություն պետք է բերի ձևով աղգային, բովանդակությամբ խնտերնացիոնալ մեր կուլտուրայի կերտման ու ամժան աշխատանքներին. նա ավելի լայն յեռանդով պետք է ուսումնասիրի կոմունիստական կուսակցության և կոմսոմոլի պատմությունը, մեր ժողովրդի մոտավոր անցյալի պատմությունը, նոր սերնդին, յերիտասարդության լայն մասսաներին կարողանա ցույց տալ հայ բուրժուական-աղգային կուսակցությունների, նրանց հեղեմոնի՝ Դաշնակցության ստոր դերը՝ վորպես իմպերիալիստների և արյունոտ ցարի վարձկանների և լակեյների, պիտի կարողանա գանազանել հայ բուրժուազիայի փաշտատական կուսակցության վոնրագործ արկածախնդրությունը՝ հայ աշխատավոր գյուղացու դժգոհության և ըմբոստության արտահայտություններից՝ ուղղված տիրող ցարական և սուլթանական կարգերի դեմ: Մենք չենք, վոր պիտի բացառական ունակ ղեկեմք հայ աշխատավոր գյուղացու, ինչպես նաև թուրք և էյուրդ աշխատավորության հեղափոխական ցասումն ու ընդվզումը՝ ուղղված հայ, թուրք, էյուրդ հարստահարիչների և ցարական ու սուլթանական բռնապետությունների դեմ: Մենք պետք է մարքսիստական պատմագրության ջախջախիչ հարվածներն ուղղենք աղգայնական կուսակցությունների և ամենից առաջ Դաշնակցության դեմ, վորումք աշխատավորության ոժգոհությունը և ըմբոստացումը տիրող սոցիալ-ֆալաֆական պայմանների դեմ՝ ամենատար անուրդի հանեցին իմպերիալիստական շուկաներում. հագուտ հայ բուրժուազիայի, վորոնք ավելի քան քառորդ դար հայ, թյուրք և էյուրդ աշխատավորների ծնվող և դարգացող դասակարգային համերաշխությունը խնդրեցին աղգամիջյան կոտորածներով և սպասարկելով իմպերիալիստներին և հայ բուրժուազիայի շահերը՝ կոտորածի յենթարկեցին միլիոնավոր հայ, թյուրք և էյուրդ աշխատավորներ:

Մի քանի խոսք ել մեր պիոներներին մասին: Համագումարը մասնավոր ուշադրութամբ և հոգատարությամբ պետք է դրադվի պիոներիայի խնդիրներով: Այստեղ հավանաբար կխոսեն պիոներ կազմակերպության ամժան մասին: Աճումը զգալի յե յերկու համագումարների միջև ընկած ժամանակաշրջանում: Բայց համագումարը սխալված չի լինի, յեթե ուղղակի ընդունի, վոր թե՛ կուսակցական և թե՛ կոմսոմոլի կազմակերպությունների ղեկավարությունը, ուշադրությունը, հոգատարությունը պիոներների նկատմամբ դեռևս մնում է միանգամայն անբավարար: Վատ են պիոներների աշխատանքի տնտեսական-տեխնիկական պայմանները, քիչ ենք մտածում պիոներներին շենք, ակումբ, հրապարակ, հագուստ տալու մասին: Առանց կուսակցական և կոմյերիտական կազմակերպության ղեկավարության ուժեղացման՝ պիոներիան չի կարող կատարել իր համալսանց պատասխանատու խնդիրները՝ բարձրացնել դրաբողական ուսման վորակը, հաստատել մանուկների մեջ դիտակցական կարգապահություն, առաջ տանել մանուկներին կոմունիստական դաս-

տիրակության գործը: Ավելի շատ ոժանդակություն, ուշադրություն, միջոցներ պիոներիային. չմոռանանք, վոր ներկայումս պիոներական կազմակերպության սերնդին և վիճակված «վերջացնել, ավարտել կոմունիզմի գործը. հատկապես նրան և դեռևս վիճակված պայքար մղել կոմունիզմի համար և նա այդ պայքարը պետք է ղեկավարի ամուր, առողջ, պողպատյա նյարդերով և յերկաթյա մկաններով» (Լենին):

Ընկերներ.— Յես կանգ առի կոմսոմոլի ներկա մի քանի հիմնական խնդիրներին վրա, ավելի շատ նշելով թերություններն ու պակասությունները. ինչ կասկած, վոր հաշվետու չըջանում Հայաստանի կոմսոմոլն ունի հսկայական հաջողություններ. նա բայլչեիկորեն կոխվել ու ամրացել է: Վերջին յերկու տարին, ինչպես Հայկոմկուսի, նմանապես նաև Հայաստանի ընկնյան կոմսոմոլի ամժան, ամրացման, դադափարական կայունացման տարիները յեղան իր Կենտրոնական կոմիտեյի ղեկավարությունը՝ Հայաստանի կոմսոմոլը դրական աշխատանքի հսկայական բաղաժով և հավաքվել ներկա համագումարին. սակայն այդ դեռ բավական չէ. հեղափոխության դարգացման ներկա չըջանը նոր խնդիրներ և դնում կոմսոմոլի առաջ, և այդ խնդիրներին լուծումն ապահովելու համար անհրաժեշտ է ուժերի նոր լարումն, ավելի բարձր կարգապահություն, ավելի բարձրորակ, հարվածային աշխատանք մեր պայքարի և չինարարության բոլոր բնագավառներում, անհրաժեշտ է ավելի բարձրորակ կուսակցավարություն կոմսոմոլի նկատմամբ:

Վերջերս հրապարակված իր զրույցում ընկ. Ստալինն ասում է.— «Եթե ամեն մի քայլ, վոր անում եմ յես իմ աշխատանքում, բանվոր դասակարգը բարձրացնելու և այդ դասակարգի սոցիալիստական պետությունն ամրացնելու համար, չնպաստի ամրացնելու և բարեխափելու բանվոր դասակարգի զրույթյունը, ապա յես աննպատակ կհամարեյի իմ կյանքը»: Մեծ ուսուցչի և առաջնորդի այս խոսքերը մշտական ուղեցույց պիտի լինեն ամեն մի կոմյերիտականի համար. մեր մեծ առաջնորդի որինակով, յուրաքանչյուր կոմունիստ և կոմյերիտական, վորտեղ ել վոր նա աշխատելիս լինի, և ինչ աշխատանքի յել վոր լինի, իր առաջնակարգ նպատակը պիտի համարի ամեն կերպ ամրացնել բանվոր դասակարգի սոցիալիստական պետությունը, ամրացնել և բարելավել բանվոր դասակարգի զրույթյունը: Այս մեծ նպատակի իրագործման համար կոմունիստներն ու կոմյերիտականները չպիտի խնայեն իրենց ուժերը, և յեթե անհրաժեշտ լինի, նաև իրենց կյանքը: Ընկերներ, մեր աշխատանքներն ընթանում են դասակարգային պայքարի սրված, լարված պայմաններում: Պետք է լինել ավելի զգաստ, ավելի աշտուրջ: Կուսակցության ընկնյան դժի անչեղ կերտման, մեր պլանների կատարումն ապահովելու համար անհրաժեշտ է ել ավելի ուժեղացնել և գործոն դարձնել պայքարը յերկու ֆրոնտի վրա: Անխնա հարվածել և ջախջախել «ձախ»-երին, ել ավելի ջախջախիչ դարձնել պայքարը ալ թեքման դեմ, վորպես տվյալ չըջանի ղեկավոր վտանգը: Կուսակցությունը սպասում է, վոր ընկնյան ղեկավոր դժի, 5-ամյակի ավարտական տարվա պլանների, յեկորդ 5-ամյակի նախապատրաստման համար մղվող պայքարում Հայաստանի մեր ընկնյան կոմսոմոլը բայլչեիկյան կայունություն, յեռանդի ու հաղթական աշխատանքի նորանոր որինակներ պետք է տա:



Թույլ տվեք, ընկերներ, հաղորդել ձեր համադրումարին, Հայաստանի բոլոր կոմյերիտականներին և պիոներներին ամենաճերմ կոմունիստական վողջուն մեր կուսակցության և նրա կենտկոմի կողմից և հաստատ հույս հայտնել, վսր համադրումարից հետո, Հայաստանի կոմսոմոլը կուսակցության կողքին և նրա ղեկավարությամբ ե՛լ ավելի կճափալի թայլ՝ չեիկյան պայքար հանուն սոցիալիզմի՝ վերջնական հաղթանակի, հանուն սոցիալիզմի հաղթանակի՝ ամբողջ աշխարհում: (Բուռն և յերկարատև ծափահարություններ, ովացիա):

Мир. № 36655





4400 12 11 1944



А. ХАНДЖИ

НАЦИОНАЛЬНОЕ СОЮЗНОЕ  
ВОЕННОВОЗДУШНОЕ ВООРУЖЕНИЕ  
ПО ВОПРОСАМ ВОЕННЫХ РАБОТ

Москва — 1935  
Средств СР. Архив



ԴԻՆԸ 15 Կ. (1 1/2 Գ.)

3-85892



Ա. ԽԱՆԺՅԱՆ

РАБОТАТЬ ПО БОЛЬШЕВИСТСКИ, БОРОТЬСЯ ПО-  
БОЛЬШЕВИСТСКИ НА ВСЕХ ФРОНТАХ ЗА СТРО-  
ИТЕЛЬСТВО СОЦИАЛИЗМА

Госиздат ССР Армении  
Эривань—1932

Հին Նոս 410



ՀՀ Ազգային գրադարան



NL0185052



